

Թիւն ողբալի կերպով տիրապետած են. եւ թէ այս անկաճութեան գլխաւոր պատճառն ամիրանի գործածութիւնն է՝ որ 60 տարիէ ի վեր քսանապատկուած է, ոչ դը կրնայ ուրանալ: Ճենաստան մտած ամիրանի գլխը բազմաթիւ տարիներէ ի վեր նշանաւոր եղանակաւ կը գերազանցէ իւր արտահանութեան գլխաւոր երկու նիւթերը՝ թէյն ու մետաքսը:

Գեո տանամեակ մը յառաջ ամիրանի փողի գործածութիւնը չափաւոր էր, բայց հետզհետէ ոչ միայն բովանդակ գեղին ցեղին մէջ մուտ գտաւ, այլ նաեւ Եւրոպա եւ Ամերիկա: Հիւսիսային Ամերիկայի մէջ՝ հոն գաղթող ճենացիք բերին ամիրանի փողը: Այս օրս Միացեալ Նահանգաց մէջ չի գտնուիր մեծ քաղաք մը, ուր ծխարան եւ ծխողներ չգտնուին: Բայց մանաւանդ արեւմտեան կողմը՝ ուր ճենական գաղթականութիւն մը կայ: Ոչ միայն Սան Ֆրանչիսքո, այլ նաեւ Չիքագո, Ս. Լուիս, Նիւ Օռլէան եւ այլն, գերի են այս մոլորութեան. իսկ Նիւ-Եորքի տեղացի ամիրան ծխողներուն թիւը 300է աւելի է: Հիմայ ծխող Ամերիկացւոց ամբողջական թիւը՝ 6000 կը համարուի:

Միացեալ Նահանգաց ամիրանի կրպակի մը ներքին մասին վրայ տեղեակ անձ մը հետեւեալ ստորագրութիւնը կ'ընէ. «Արեւելեան զգեստով եւ շղարշաւոր մանկամարդ կին մը կը վերցնէ թանձր եւ մետաքսեայ վարագոյրը՝ որ ընդունելութեան սենեակը փողոցէն կը բաժնէ, եւ զայցելուն ներս կը հրաւիրէ: Ոտուրները փափուկ եւ թանձր պարսկական գորգերու մէջ կը մտնեն խոր: Անձայն լուծիւն մը կը տիրէ մեծ ու բարձրաձեղուն սենեկին մէջ: Զօրեկուան լոյսը պատահաններու առջեւ ձգուած թանձր վարագոյրներէն չի կրնար ներս թափանցել: Փոխանակ նկարէն թղթի՝ թանկագին, արուեստական հանգրիճեալ լաթեր կը ծածկեն որմերը, երկայն շղթաներով վար կախուած գոյն-գոյն ապակիներով լապտերներն աղօտ լոյս մը կը սփռեն: Սենեկին միջավայրը լաթով ծածկուած սեղան մը կայ, որուն վրայ սկահ մը կը գտնուի, յորում կրակը կը շառաչէ եւ յափըշտակիչ բուրում կը տարածէ: Որմերու շուրջը փափուկ, ծանրագին գորգերով եւ մորթերով դրուագեալ ցած բարձր կան, որոնց քովը կը գտնուին փոքր սեղաններ, եւ ասոնց վրայ ալ նորանշան միակայններով հաստ, դժուարակիր ծխաքարչեր կամ շաքիլներ. ամէն մէկ ծխափողին քով փոքր վառած կանթեղ մը կայ: Բարձրուն քով՝ շարժական, գոյնգոյն նկարուած

ճենական աշապահ գործի մը կը գտնուի, որպէս զի կանթեղին տկար լոյսն արգելք չըլլայ քաղցր քնոյն: Սենեկին մէջ խորին լուծիւն կը տիրէ, եւ հոս հոն կը պառկին 14 մանկահասակ պատանիք. ոմանք կը ննջեն, ոմանք ընդարմացած՝ եւ ոմանք ծխափողը ձեռքունին՝ քաղցր հոտը կը ծծեն: Արեւելեան զգեստով հագուած երեք կանայք անձայն սենեկին մէջ հոս հոն կը շրջին, մերթ լապտերը կը վառեն, մերթ միակայնները կը լեցնեն, եւ երբեմն քնէն արթնցողներուն փոքր սկահներով շէշէ՞ կամ խահուէ կը մատուցեն:»

Իրագէտք կը հաստատեն որ ամիրանի ջղատիչ գործածութիւնն Ամերիկայի մէջ պիտի չընդհանրանայ. որովհետեւ սպիտակացեղնասոր շատ դժուարաւ կը վարժի, վասն զի ասոր համար յարատեւութիւն կը պահանջուի, զոր ունի տոկուն Մոնկոլեան ցեղը, բայց ոչ եթէ սպիտակը: Եթէ Եւրոպացի մը ծխախոտի գործածութիւնը քանի մ'օրուան մէջ կ'ուսանի, առ նուազն ինն ամսուան պէտք ունի, մինչեւ որ ամիրանի գերին ըլլայ: Ոմանք երկարատեւ ջանքերէ վերջն ալ ո՛ր եւ է եղանակաւ չեն կրնար վարժիլ:

Վերջապէս յիշենք նաեւ ամիրան ուտելու սովորութիւնը, որ մանաւանդ Բրիտանական Հնդկաստանի մէջ՝ ուր տարածուած է նաեւ կանեփի ծխելը, ընդ բնաւ տիրած է: Մեծն Բրիտանիայի մէջ ալ սիրալիւր ընդունելութիւն գտած է. սակայն դիտելի է որ ամիրան ուտելն անհամեմատ աւելի վնասակար չարիք է: Որովհետեւ ամիրան ծխողը կրնայ առանց առողջութեան նշանաւոր խանգարման տակաւ մոլորութենէն ետ կենալ. սակայն ամիրան կերողները՝ ըստ չափուն՝ առաւել կամ նուաղ սաստիկ ստամոքսի խանգարում կ'ունենան եւ եթէ բոլորովին ետ կենան ամիրանէ՝ գրեթէ առանց բացառութեան աղեաց խանգարման հետեւութեամբ կը մեռնին: Չափաւոր ծխողներն արեւելեան ժողովրդոց աչաց առջեւ շատ քիչ խոտան են, ինչպէս առ Եւրոպացիս չափաւոր գինարբուները. սակայն ամիրան կերողները՝ մանաւանդ Ցաճկաց քով շատ անարգ են: Ի. Վ. Պոլիս այս պիտիք ընդհանրապէս իրենց ամիրանովը թէրէտ ըսուած շուկան կը գտնուին եւ ասոր համար ժողովրդեան բերանը թէրէտէ կը կոչուին: Այս պիտիք շատ շուտով կը ճանցուին, որովհետեւ երեսին տժգոյն եւ խորշմած կ'ըլլայ, աշուրները մեռեալ, իսկ լեզուին թոթով: Երկայն փայտակերտ սրահի մը մէջ բազմոցին վրայ նստած՝ ամիրան կը կլեն: Թերաւարժներն ի սկզբը